

# ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

09.05.2020



## Սիրելի՛ սյունեցիներ

Հայրենական մեծ պատերազմի պատվարժան վետերաններ

Արցախյան պատերազմի սիրելի՛ ազատամարտիկներ

Շնորհավորում են բոլորիս Մեծ հայրենականում տարած հաղթանակի 75-ամյակի կապակցությամբ:

Հայերիս պատմության համար ևս այն հայրենասիրության, քաջության, համառ պայքարի գնով ձեռքբերված պատմության փառավոր էջերից է, որին գումարվեց մեր նոր հաղթանակը՝ Շուշիի ազատագրումը, ու Մայիսի 9-ի տոնը մեզ համար նոր իմաստ ու խորհուրդ ստացավ:

1945-ի հաղթանակի հերոսների՝ հայրենիքի հանդեպ նվիրված սիրո ու հավատարմության վառ օրինակը դաստիարակեց ու ոգեշնչեց մեր նորագույն պատմության հերոսներին:

Խոր հարգանքով գլուխ ենք խոնարհում նրանց հիշատակի առջև, ովքեր կռվեցին ռազմաճակատում, ովքեր աշխատեցին թիկունքում՝ մոտեցնելով հաղթանակը:

Մեր կողքին այսօր արդեն Մեծ հայրենականի սակավաթիվ վետերաններ են ապրում, նրանց կյանքն ու հուշերը անգին մասնիկներն են, իսկ Արցախյան պատերազմի հերոսներից շատերը մեր կողքին են ու պետք է ըստ արժանվույն ստանան մեր սերը, գնահատանքը, հարգանքն ու երախտագիտությունը:

Թո՛ղ որ Հայաստան երկրում միշտ տիրի խաղաղությունը, ու մեր նոր հաղթանակները լինեն ոչ թե ռազմի, այլ հզոր պետականության կառուցման տարբեր ճակատներում:

Շնորհավոր Մայիսի 9, փա՛ռք 1945-ի և 1992-ի հաղթանակների համար կռված ու այս օրը տոնական դարձրած տարբեր սերունդների բոլոր հերոսներին: